Դեկտեմբեր, 2025

# Թեստ կերպարվեստից և կիրառական արվեստից

## Հրահանգ

Ձեր առջև քննական թեստի էլեկտրոնային բուկլետն է:

Գործնական աշխատանքը կատարեք գործնական աշխատանքի համար հատկացված թերթիկի վրա: Գործնական աշխատանքը (առաջադրանք 26) կատարելու համար Ձեզ բաժանել են մատիտ, ռետին և սրիչ:

Գործնական առաջադրանքի համար հատկացված թերթիկի վրա աշխատեք մատիտով: Մատիտ թույլատրվում է գործածել միայն այս առաջադրանքը կատարելու համար:

**Թեստի առավելագույն միավորն է՝ 60:**

**Թեստի վրա աշխատելու համար տրվում է 4 ժամ:**

**Մաղթում ենք հաջողություն :**

**№ 1-19 առաջադրանքների հրահանգ.** (Յուրաքանչյուր ճիշտ պատասխան՝ 1 միավոր) Յուրաքանչյուր հարցին տրված է չորս ենթադրական պատասխան: Դրանցից միայն մեկն է ճիշտ: Ընտրված պատասխանը տեղափոխեք պատասխանների թերթիկի վրա հետևյալ կերպ՝ պատասխանների համապատասխան վանդակում դրեք X նշանը: Ոչ մի ուրիշ նշում՝ հորիզոնական կամ ուղղահայաց գծեր, շրջագծում և այլն, համակարգչային ծրագիրը չի ընկալում: Եթե ցանկանում եք պատասխանների թերթիկի վրա ուղղել պատասխանն, ամբողջությամբ ներկեք վանդակը, որտեղ դրել եք X նշանը, որից հետո միայն նշեք պատասխանի նոր տարբերակը (դրեք X նշանը նոր վանդակում): Հնարավոր չէ երկրորդ անգամ ընտրել այն պատասխանը, որն ուղղել եք:

(1) **1. Ո՞ր ճարտարապետների աշխատանքների բանաքաղության (կոմպիլյացիա) հիման վրա ստեղծված մեկնաբանությունն (ինտերպրետացիա) է ներկայացված նկարում:**



ա) Ֆրենկ Գերիի և Ֆրենկ Լլոյդ Ռայթի,

բ) Զահա Հադիդի և Յորն Ուդզոնի,

գ) Անտոնի Գաուդիի և Լը Կորբյուզիեի,

դ) Սանտյագո Կալատրավայի և Գուստավ Էյֆելի:

(1) **2. Ո՞րն է Հոնիական օրդերին բնորոշ առանձնահատկությունը:**

ա) Սյունը չունի խարիսխ,

բ) ֆրիզը բաղկացած է տրիգլիֆներից և մետոպներից,

գ) ձևերը մեծածավալ են, երկրաչափորեն խիստ և պարզունակ,

դ) խոյակը զարդարված է խորը կանելյուրներով և գալարազարդերով (վոլյուտա):

(1) **3. Ո՞ր հնագույն քաղաքին և/կամ տաճարին է պատկանում լուսանկարներում ներկայացված ճարտարապետության և քանդակագործության մանրամասը:**





ա) Պերսեպոլիսին,

բ) Ռամեսսեումին,

գ) Դուր Շարուկինին,

դ) Սուզային:

(1) **4. Հաշվի առնելով ոճի առանձնահատկությունները և թեմատիկան որոշեք՝ արվեստի ո՞ր ուղղությանն է պատկանում ներկայացված գեղանկարը:**



ա) Ռոկոկոյին,

ბ) Նեոկլասիցիզմին,

გ) Ռեալիզմին,

დ) Վերածննդին:

(1) **5. Ո՞ր մշակույթի հետ է կապված Մամուկա Թավաքարաշվիլիի «Ընձենավորի» նկարազարդումը:**



ა) Պարսկական,

ბ) ճապոնական,

გ) չինական,

დ) հնդկական:

(1) **6. Անվանե՛ք XII-XIV դարերի արևմտաեվրոպական արվեստի այն ոճը, որը բնութագրվում է գծային ռիթմով և կոմպոզիցիայի ուղղահայաց զարգացմամբ, ինչպես նաև քանդակագործության և ճարտարապետության համադրությամբ:**

ա) Բարոկկո,

բ) գոթիկա,

գ) ռոմանտիզմ,

դ) կլասիցիզմ:

(1) **7. Ո՞ր գեղարվեստական տեխնիկայի միջոցով է ստեղծել Օնորե Դոմիեն ներկայացված նկարը:**




ա) Փայտագրության,,

բ) մոնոտիպի,

գ) վիմագրության,

դ) լինոփորագրության:

(1) **8. Ի՞նչ է պատկերում Վանիտասը։**

ա) Քաղաքային բնանկար,

բ) նատյուրմորտ գանգով,

գ) ծովային տեսարաններ,

դ) անտառային բնանկար՝ մարդկանցով։

(1) **9. Ներկայացված նմուշներից ո՞րն է Ֆովիզմի ոճի ստեղծագործություն:**

| ա) | բ) | գ) | դ) |
|---|---|---|---|
|  |  |  |  |

(1) **10. Ո՞ր ձևակերպումն է վերաբերում պոստիմպրեսիոնիզմին:**

ա) Մարդու նկատմամբ առանձնահատուկ հետաքրքրություն, նրա իդեալական, ընդհանրացված կերպարի ըմբռնում և արտացոլում աշխատանքում,

բ) արագ փոփոխվող աշխարհում պահի անկրկնելիության, ռոպեական տեսողական տպավորության արտացոլում,

գ) դեֆորմացիա-ոճավորում, ձևերի չափազանցում, արտահայտչականության և հուզական ազդեցության ուժեղացում,

դ) երևույթի և առարկայի հիմնական էության, շրջապատող աշխարհի ընդհանուր, հավերժական վիճակի որոնում և արտացոլում աշխատանքում:

(1) **11. Գեղանկարչության ներկայացված նմուշներից ո՞րն է պատկանում Մոսե Թոիձեի ստեղծագործականությանը:**

| ა) | ბ) | გ) | დ) |
|---|---|---|---|
|  |  |  |  |

| (1) **12. Ներկայացված նմուշներից ո՞ր գեղանկարի մանրամասն է պատկանում Անրի Մատիսի աշխատանքին:** | | | |
|---|---|---|---|
| ա)  | բ)  | գ)  | դ)  |

(1) **13. Ո՞ր ձևակերպումն է արտացոլում իտալական Բարձր Վերածննդի առանձնահատկությունը:**

ա) Նկարչի ուշադրությունը գրավում են իրական կյանքին առնչվող սովորական գործողությունը և կենցաղային մանրամասները, ինչն ընդգծում է կոմպոզիցիայի անմիջական բնույթը,

բ) ֆրոնտալ կերպով ծավալված գործողությունը ներկայացվում է ավարտված և հստակ, տեկտոնիկորեն կառուցված

կոմպոզիցիայի տեսքով,

գ) շրջանակով կտրված նկարի մանրամասները կադրի տպավորություն են ստեղծում և ավելի ուժգին դարձնում դիտողի ու պատկերված տեսարանի միջև կապը,

դ) մարդկային ֆիգուրը և տարածությունը փոխանցվում են ներըմբռնմամբ՝ առանց հեռանկարի օրենքների անատոմիայի իմացության:

(1) **14. Սահմանե՛ք տրված համապատասխանության տրամաբանությունը և որոշե՛ք, թե որ զույգն է անհամատեղելի:**

ա) Պոլ Գոգեն - Ֆովիզմ,

բ) Անրի դը Թուլուզ-Լոտրեկ – Աբստրակցիոնիզմ,

գ) Վինսենթ վան Գոգ – Էքսպրեսիոնիզմ,

դ) Պոլ Սեզան – Կուբիզմ:

(1) **15. Ո՞ր քանդակագործներն են գործունեություն վարել Հին Հունաստանում բարձր դասականության դարաշրջանում:**

ա) Ֆիդիասը, Միրոնը, Պլաքսիտելեսը,

բ) Սկոպան, Լիսիպոսը, Պոլիկլետոսը,

գ) Ագեսանդրեսը, Լեոքարեսը, Ֆիդիասը,

դ) Միրոնը, Ֆիդիասը, Պոլիկլետոսը:

(1) **16. Գեղանկարչական ո՞ր գործի մանրամասն է ներկայացված լուսանկարում:**



ա) Վելասկեսի «Պապ Ինոկտենտիոս X-ի դիմանկարը»,

բ) Էլ Գրեկոյի «Կարդինալ Ֆերնանդո Նինյո դե Գուեվարայի դիմանկարը»,

գ) Ռաֆայելի «Լևոն X պապի դիմանկարը»,

դ) Տիցիանի «Պողոս III պապի դիմանկարը»:

(1) **17. Պլատոնն ասել է. «Չևի գեղեցկության մեջ ես նկատի չունեմ այն գեղեցկությունը, որը բնութագրում է կենդանիներին կամ բնության պատկերները, այլ նկատի ունեմ ուղիղ գծերն ու շրջանագծերը, հարթությունները կամ պինդ պատկերները, որոնք ստեղծվել են քանոնով և այլ գործիքներով: Դրանք ես անվանում եմ ոչ թե համեմատաբար գեղեցիկ, ինչպես մյուս իրերը, այլ բացարձակապես գեղեցիկ»:**

**Ո՞ր հոսանքի գործերին են համապատասխանում Պլատոնի խոսքերը:**

ա)Աբստրակցիոնիզմին,

բ) Ար-Նուվոյին,

գ) Էքսպրեսիոնիզմին,

դ) Սյուրռեալիզմին:

(1) **18. Ներկայացված կոմպոզիցիայում ո՞ր հիմնական արտահայտչամիջոցն է գերակշռում:**



ա) Գիծը,

բ) գույնը,

գ) ձևը,

դ) ֆակտուրան:

(1) **19. Թվարկածներից ո՞ր կառույցն է պատկերված լուսանկարում վերևից:**



ա) Այա Սոֆիայի տաճարը,

բ) Հռոմի Պանթեոնը,

գ) Թբիլիսիի սպորտի պալատը,

դ) Ժայռի գմբեթը:

№ 20-25 առաջադրանք: *«Ճիշտ է - Սխալ է»*

**Առաջադրանքի հրահանգ.** Ուշադիր ծանոթացե՛ք տրված դրույթներին, եթե համարում եք, որ դրույթը ճիշտ է, ապա նշե՛ք համապատասխան վանդակը: Նման դեպքում մեկնաբանություն չի պահանջվում: Եթե համարում եք, որ դրույթը սխալ է, ապա նշե՛ք համապատասխան վանդակը և հատուկ հատկացված տեղում գրե՛ք ճիշտ ձևակերպումը:

**Ցուցում.** Սխալ դրույթի դեպքում, տրված բացատրությանը կարող եք համապատասխանեցնել ճիշտ տերմին/բառ կամ տրված տերմինի/բառի համար գրեք ճիշտ բացատրություն: Հաշվի առեք, որ պատասխանը չի ընդունվի, եթե տրված բացատրության դրական ձևը փոխեք բացասականով կամ հակառակը:

**Նմուշ.**



(1) **20. Հյուսիսային Վերածննդի նկարիչների մեծամասնությանը չէր մտահոգում նկարում մարդու համամասնությունների մանրակրկիտ ճշգրտությամբ պատկերելը:**

(1) **21. Ներկայացված արվեստի գործը ոճով և կատարման եղանակով պատկանում  է իմպրեսիոնիստ Էդգար Դեգային:**



(1) **22.** Նկարում ներկայացված է Միջագետքի արվեստի նմուշ, որը հայտնի է «Իշտարի դարպասներ» անվամբ:



(1) **23. Փարիզի Աստվածածնի տաճարը (Notre Dame de Paris) ռոմանական ճարտարապետության դասական օրինակ է:**

(1) **24.** Պատկերը պայմանական, դեկորատիվ եղանակով փոխանցելը կոչվում է սֆումատո:

(1) **25. Արվեստի ներկայացված նմուշը կատարված է գեղանկարչության տեխնիկայով:**



(7) Առաջադրանք № 26. *Գործնական աշխատանք*

Հրահանգ.

Ստեղծեք գրաֆիկական նատյուրմորտ լուսանկարներում պատկերված մրգերով (երեք սերկևիլ) և ծաղկամանով: Նատյուրմորտը ստեղծելիս հաշվի առեք կոմպոզիցիոն բաշխման սկզբունքը: Պահպանեք առարկաների համապատասխան համամասնությունները՝ հաղորդելով դրանց ֆակտուրա և ծավալ: Ընկած ստվերները պատկերելիս որոշեք լուսավորության ուղղությունը: Առաջադրանքը կատարեք գործնական աշխատանքի համար հատկացված թերթիկի վրա:





**Առաջադրանքներ № 27-29.** *Ժամանակագրության որոշում:*

**Առաջադրանքի հրահանգ.** Դասավորեք (հնագույնից մինչև նորագույն) գեղարվեստական հոսանքները, նկարիչներին, ճարտարապետության և կերպարվեստի նմուշներն՝ ըստ դրանց ստեղծման ժամանակի: Պատասխանները գրառեք պատասխանների թերթիկի վրա տրված աղյուսակում: Հաշվի առեք, որ աղյուսակում գրվում է միայն ընտրած միավորի համապատասխան թվանշանը:

(1) **27. Դասավորեք ներկայացված արվեստի նմուշները՝ ըստ դրանց ստեղծման ժամանակի:**

| 1. | 2. | 3. | 4. |
|---|---|---|---|
|  |  |  |  |

| (1) **28. Դասավորեք վրացական պաշտամունքային ճարտարապետության նմուշները՝ ըստ դրանց ստեղծման ժամանակի։** | | | |
|---|---|---|---|
| 1.<br> | 2.<br> | 3.<br> | 4.<br> |

| (1) **29. Դասավորեք արվեստի նմուշները՝ ըստ դրանց ստեղծման ժամանակի:** | | | |
|---|---|---|---|
| 1. | 2. | 3. | 4. |
|  |  |  |  |

(3) **Առաջադրանք № 30.** *Համապատասխանության որոշում.* Համապատասխանեցրեք A սյունակում թվարկված դարաշրջանները/հոսանքները B սյունակում ներկայացված արվեստի գործերին։ Հաշվի առեք՝ մեկ դարաշրջանին/հոսանքին համապատասխանում է միայն մեկ արվեստի գործ։

<table>
<tr><td colspan="2">A. 1. Արխայիկ Հունաստան</td><td colspan="2">2. Բարոկկո</td><td>3. Իմպրեսիոնիզմ</td></tr>
<tr><td>B. ა)<br></td><td>ბ)<br></td><td>გ)<br></td><td>დ)<br></td><td>ე)<br></td></tr>
</table>

(3) **Առաջադրանք № 31.** *Համապատասխանության որոշում.* B սյունակում ներկայացված կերպարվեստի նմուշները համապատասխանեցրեք A սյունակում նշված դրանց հեղինակներին: Հաշվի առեք՝ մեկ հեղինակին համապատսխանում է միայն մեկ նկար:

| | | | |
|---|---|---|---|
| **A.** 1. Դիմիտրի Շևարդնաձե | 2. Դավիթ Կակաբաձե | 3. Քեթևան Մաղալաշվիլի | |
| **B.** ა.  | ბ.  | გ.  | დ.  |
| ე.  | | | |

# Գրավոր առաջադրանքների հրահանգ

Ուշադիր ծանոթացե՛ք առաջադրանքներին և ըմբռնե՛ք դրանք:
Աշխատանքը կատարեք դյուրըմբռնելի ձեռագրով: Այն հատվածները, որոնք դժվար ընթեռնելի են, չեն ստուգվի և գնահատելիս չեն նկատառվի:
Գրավոր չորս աշխատանքներին կից ներկայացված են ցուցումներ: Այդ ցուցումներին պետք է պատասխանեք այնպես, որ աշխատանքն իմաստային տեսանկյունից լինի ամբողջական: Զերծ մնացեք հարցերին տրված մեխանիկական պատասխաններից:
Ձեր կարծիքը ձևակերպեք պարզ, հստակ և հիմնավորված: Աշխատանքը կգնահատվի, նրանում դրսևորված փաստարկման (սեփական կարծիքն օրինակներով հիմնավորելու) և ինքնուրույն մտածելու ունակության համաձայն:
Դատողությունը պետք է լինի տրամաբանական, միտքը հասկանալի արտահայտված:
Տեղափոխեք աշխատանքը պատասխանների թերթիկի վրա:
Պատասխանների թերթիկում թույլ տրված սխալի վրա ուղղակի գիծ քաշեք, չի թույլատրվում առնել այն փակագծերի մեջ կամ խազմզել:

(4) Առաջադրանք № 32. Ներկայացված կոմպոզիցիաներն աստվածաշնչյան սյուժեների գեղարվեստական մեկնաբանություններ են, որոնցում հստակություն են ձեռք բերում բովանդակային, գաղափարական և գեղարվեստական կերպարի բնույթի առանձնահատկությունները: Ընտրե՛ք չորս աշխատանքներից մեկը, վերլուծե՛ք և որոշե՛ք.

1.



2.



3.



4.



ա. Ո՞ր աստվածաշնչյան սյուժեն է պատկերել նկարիչը: Մտորեք ստեղծագործության բովանդակային և տեսողական համապատասխանության շուրջ:
բ. Բնութագրե՛ք ստեղծագործության գեղարվեստական առանձնահատկությունները և դատողություն արեք, թե տարբերվում է արդյոք այն ավանդական պատկերագրությունից և արտահայտում է արդյոք գեղարվեստական պատկերի բնույթը: Հիմնավորե՛ք ձեր պատասխանը:

(15) **Առաջադրանք № 33. Արվեստի նմուշի նկարագիր-վերլուծություն:**
Ըմբռնե՛ք, վերլուծե՛ք և գնահատե՛ք ստորև ներկայացված արվեստի նմուշը:



**Կատարե՛ք առաջադրանքն, ըստ ցուցումների.**

(3) **33.1** Նկարագրե՛ք և բնութագրե՛ք կոմպոզիցիան: Ո՞ր ժանրին է պատկանում այս կոմպոզիցիան: Հիմնվելով նյութի և տեխնիկայի վրա՝ որոշե՛ք, թե կերպարվեստի որ ճյուղի նմուշն է ներկայացված:

(3) **33.2** Վերլուծե՛ք և համառոտ ձևակերպե՛ք, թե պատկերավորման ինչ արտահայտչամիջոցներ ու հնարքներ է կիրառում հեղինակը նկարում գեղարվեստական պատկերի բնույթը ստեղծելու համար:



(3) **33.3** Գեղարվեստաոճական բնութագրիչների հիման վրա որոշե՛ք հռսանքը, որոշե՛ք, թե որ երկրի և դարաշրջանի  արվեստի նմուշ է ներկայացված, նշե՛ք հեղինակի անունը:

(3) **33.4** Գնահատե՛ք աշխատանքը՝ արտահայտե՛ք Ձեր վերաբերմունքը, մտորե՛ք և հիմնավորե՛ք Ձեր կարծիքը:

(3) **33.5** Դատողություններ արե՛ք ազդեցությունների շուրջ: Դիտարկեք ստեղծագործությունը պատմամշակութային և այլ համատեքստում: